

ԼԻԼԹ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՍԻՄԻՆ ԴԱՆԵՇՎԱՐ. ՆԱԽԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՖԵՄԻՆԻԶՄ

Միմին Դանեշվարը արդի իրանական գրականության մեծահամբավ արձակագիրներից է, որի թե՛ կյանքն և թե՛ ստեղծագործական գործունեությունը, 20-րդ դարի երկրորդ կեսի Իրանին բնորոշ հասարակական քաղաքական մթնոլորտում ստեղծագործող կին գրողի դերի ուսումնասիրման համար կարևոր հիմք կարող են ծառայել: Դանեշվարը այն ինքնատիպ գրողներից է, որի ստեղծագործություններում մեծ նշանակություն ունեն ինչպես նախահեղափոխական, այնպես էլ հետհեղափոխական շրջանի գաղափարաքաղաքական հիմնահարցերը:

Արձակագիրը գրական աշխարհ մուտք գործեց 20-րդ դարի կեսերին, երբ երկրի հեղափոխական և քաղաքական շիկացումների մթնոլորտում սկիզբ էր առնում “սոցիալական ուղղվածության” գրական շարժումը¹, որը փոխարինելու էր գալիս դարասկզբին Իրանում մեծ տարածում գտած “պերսիանիզմին” կամ ազգայնական գաղափարական շարժմանը²:

Անցյալ դարի 60-70-ականների գրականությունը Իրանում մեծագույն ուժ էր հասարակական գիտակցության զարգացման համար: Այդ տարիներին գրական ստեղծագործությունները, հատկապես գեղարվեստական արձակը, ընկալվում էին նաև որպես սոցիալական բնույթի փաստաթղթեր, որտեղ ուղղակիորեն և բազմակողմանիորեն ներկայացվում են տվյալ հասարակության տնտեսական, պատմական, քաղաքական, հոգեբանական հիմնահարցերը: “Ճշմարիտ գրականություն” ստեղծելու նախապայմաններից էր համարվում գրական տեքստերի մեջ սոցիալական արդարության կենսական տարրերի և մարդկանց ցածր կենսակերպի հիմնախնդիրների արծարծումը:

1960-70 ական թվականների հասարակական-քաղաքական տեղաշարժերը և ընկալումները իրենց դրոշմը դրեցին Միմին Դանեշվարի գեղարվեստական ձեռագրի վրա: Ինչպես այդ տարիների յուրաքանչյուր ազատախոհ, առաջադեմ գրող, Դանեշվարը նույնպես ստանձնեց

“սոցիալական մարզարեի” դերը՝ ընթերցողների համար կանխատեսելով այն ապագան, որ պետք է գար:

Դեռևս 1947-ին լույս ընծայվեց Միմին Դանեշվարի “Աթեշե Խամուշ” (“Մարած Կրակ”) պատմվածքների ժողովածուն: Թեև այն չարժանացավ մեծ ուշադրության, այնուամենայնիվ մնաց արձակի ժանրում պարսիկ կնոջ կողմից կատարված առաջին ստեղծագործական վործերից մեկը: Երբ երիտասարդ Դանեշվարը Թեհրանի համալսարանում պաշտպանում էր պարսկական գրականության վերաբերյալ իր դոկտորական թեզը, նրա գիտական ղեկավար՝ Իրանում առաջին կին համալսարանական պրոֆեսոր, գրականագետ Ֆաթեմե Սայամ բարձր գնահատելով հեղինակի առաջին պատմվածքներից մեկը, խորհուրդ տվեց նրան գրականագիտությամբ չգրադվել և շարունակել ստեղծագործական ուղին⁵:

Մինչև 1960 թվականը արձակագիրը հիմնականում զբաղված էր գիտամանկավարժական աշխատանքով: Երկար տարիներ դասավանդելով Թեհրանի համալսարանում, Դանեշվարը այդպես էլ չարժանացավ պրոֆեսորի կոչման, ինչին ամեն կերպ խոչընդոտեցին ՍՍՀՄ-ի հրահանգներն ու հետապնդումները⁶:

“Նույնիսկ այն մի քանի ստեղծագործությունները, որ մենք ենք ստեղծել, մեծ նվաճում կարելի է համարել: Թող Միմուսս դը Բովուարը գա ու մի քանի տարով ապրի այն կյանքով, ինչ ես եմ ապրել և եթե նրան հաջողվի մի տող անգամ ստեղծագործել, ես կվախեմ իմ անունը”, - համարձակորեն խոստովանում է Դանեշվարը իր անցած ստեղծագործական բարդ ու դժվարին ուղղու մասին⁷:

Դանեշվարի վաղ շրջանի գեղարվեստական նախասիրությունների ու սկզբունքների, աշխարհայեցողության ձևավորման մեջ մեծ արժեք ունեն ամուսնու՝ Իրանի մեծագույն արձակագիր Ջալալ Ալե Ահմադի գաղափարաքաղաքական դիրքորոշումները: 1982-ին ի հիշատակ վաղամեռիկ ամուսնու՝ Դանեշվարը հրատարակեց ինքնակենսագրական նյութի հիման վրա գրված “Լորուրե Ջալալ” (“Ջալալի Մայրամուտը”) ինքնատիպ ստեղծագործությունը:

Ս. Դանեշվարի նախահեղափախական շրջանի ստեղծագործություններում առաջնային տեղ են զբաղեցնում կանանց հիմնախնդիրները: Դա է փաստում պարսիկ հայտնի գրաքննադատ, բանաստեղծ Մոհամմադ Ալի Սեփանլուի 1988-ին լույս ընծայված “Իրականության իմաստավորումը: Քսանյոթ պատմվածքներ, ժամանակակից Իրանի քսանյոթ գրողների կողմից” խորագրով դարակազմիկ անթոլոգիան, որտեղ Միմին Դանեշվարը ներկայացված է, որպես արևելյան ավանդապահ կնոջ ծանր վիճակը լուսաբանող հեղինակ⁸:

Սակայն, ինչպես նշում է ամերիկացի հետազոտող Զ. Թալաթովը, նախահեղափախական շրջանի պարսիկ կին գրողների ստեղծագոր-

ծությունները չունեին զենդեքային ինքնություն: Կին հեղինակները հավատարիմ մնալով դարավերջին իշխող “սոցիալական ուղղվածության” գրականության կանոններին՝ կանանց թեման ներկայացրեցին. որպես սոցիալական հիմնախնդիրների անբաժանելի մաս⁹: Նախահեղափոխական արձակույմ դեռևս գերիշխող էին մնում սոցիալական անարդարությունների գոհ, իրավագուրկ ու ստորացված կանանց “հնամաշ”¹⁰ կերպարները, որոնք իրենց ավանդական իմաստավորումն են գտել մահ Դանեշվարի մահափոխության արձակույմ: 1961-ին միաժամանակ լույս ընծայվեցին արձակագրի “Շահրե Չուն Բեհեշտ” (“Դրախտի մահն քաղաքը”) և “Սուրաթ Խանն” (“Խաղատուն”) պատմվածքների ժողովածուները:

Իրանական հասարակության համար հրատապ սոցիալ-քաղաքական, քարոշային էթիկական, ինչպես մահ կանանց հիմնախնդիրները իրենց գեղարվեստական արժեքորումը ստացան հատկապես Դանեշվարի “Խաղատուն” ժողովածույում գետեղված “Բե Զի Սալամ Զոնամ” (“Էլ ո՞ւմ քարենմ”), “Թասադուֆ” (“Պատահար”), և “Սուրաթ Խանն” (“Խաղատուն”) պատմվածքների մեջ:

Ինչպես նշում է հայտնի գրականագետ Ն. Ռահիմիյեն, հեղինակի վերը նշված պատմվածքները համախմբված են խաղատան մետաֆորիկ հասկացության մեջ¹¹: “Պատահար”-ի տմային տնտեսուհին, միայնակ ու լքված կինը “Էլ ու՞մ քարենմ” պատմվածքից, “Խաղատուն” Սև անվանումով հերոսը քանտարկված են իրենց սեփական մետաֆորիկ խաղատների մեջ, որոնց կյանքը պայմանավորված է անվերահսկելի պայմանականություններով և չափանիշներով:

“Պատահար” պատմվածքում Դանեշվարը մերկացնում է շահական Իրանում ձևավորվող “արևմտականացված և մոդեռն” կնոջ մոր կերպարը: Նադերեն կամ “Նադիան”, վարձում էր կերպարանափոխվել, մնաճակելով շրջապատում յուրաքանչյուր կնոջ, ով մախրնտրում էր “արևմտամետ” կենսակերպը: Կնոջ երազանքը ցանկացած գնով շքեղ մեքենա ունենալն էր, ինչպես հարևանուհի Սադեղեն, “ով իր թանկարժեք մեքենան վարելիս կրում էր սև ակնոցներ և սպիտակ ձեռնոցներ”¹²: Նադիան ջանում էր մեքենան կանգնեցնել օտարերկրյա դիվանագիտական ծառայությունների հարևանությամբ, մախրնտրելով շփվել միայն արտասահմանցիների հետ, մա ծաղրում էր ավանդապահ կանանց, ովքեր հետևելով կրոնական սովորույթներին՝ դեռևս մախրնտրում էին սև չադրան: Նադիայի ցանկասիրության, պերճաշուք ապրելակերպի տարերքը խափանեց ընտանեկան անդորրը, թողնելով ամուսնուն՝ սովորական գրասենյակային մի ծառայողի, պարտքերի ու հուսալքության մեջ: Նադիայի կերպարով Դանեշվարը ամբողջացրեց շահական Իրանի “առաջադեմ կնոջ” իդեալը, ով իրականում չէր ընկալում “արևմտյան, մոդեռն, ազատություն” հասկացությունները, ով ամուսնում

էր իր ազգային և կրօնական ավանդույթները, ներքուստ մնալով սեփական անկիարժեք բարդւոյթների գոհ:

Դանելշվարի “Խաղատուն” խորագրով հաջորդ պատմվածքը խոսում է հասարակության մեջ խոր արմատներ ունեցող սոցիալական ու հոգեբանական խնդիրների մասին՝ պատկերելով երիտասարդ ու անփորձ դերասանուհու հուսալքված ու անելանելի վիճակը, որն իր հիղության պատճառով ստիպված էր հրաժարվել քաթերական ներկայացումներից: Հերթական երկրպագուներից մեկի հետ ունեցած “թեթև արկածի” պատճառով, դերասանուհին ցանկանում էր սպանել դեռ չծնված մանկանը, որի համար նույնիսկ գումար չէր կարող հայթայթել: Սակայն նույն քաղաքում Սիլյահ անունով դրամատուրգը օգնության ձեռք է մեկնում դերասանուհուն, շարունակելու վերջինիս քաթերական արվեստը: “Սիլյահ”, որը բառացի նշանակում է սև, իրանական ժողովուրդների մոտ տարածված խելամիտ քաթերական կերպար է, որը նաև նույնացվում է Շեքսպիրյան “խելկատակի” հետ¹³:

Հեղինակի ռեալիստական խստաշունչ ոճով գրված այս պատմվածքը նպատակ ուներ շեշտադրելու ապօրինի երեխային սպասող միայնակ կնոջ նկատմամբ հասարակության մեջ ընդունված բացասական ու անընդունելի վերաբերմունքը, միաժամանակ նաև ընդգծելով՝ անհատի հումանիստական մոտեցումը ցավագին այդ խնդրին:

Բավական ուշագրավ ճակատագիր ունի Դանելշվարի “Էլ ու՛մ - բարևն” պատմվածքը: Ստեղծագործական երկու փուլերում հեղինակը այն ներկայացրել է տարբեր իմաստային մեկնաբանություններով: Պատմվածքի առանցքը “Գիտակցության հոսքի” ոճային նախասիրությամբ շարադրված միայնակ ու ծեր կնոջ՝ Քոքեար Սոթանի հիշողություններն են: Ամուսնուն, աշխատանքը, նույնիսկ սիրելի տնային սարդին կորցրած կինը՝ հայտնվելով բացարձակ հուսալքության մեջ, ստիպված էր միակ աղջկան ամուսնացնել բռնարար մեկի հետ, որը հարկադրաբար գրկում էր նրան երկար տարիներ հարազատ մորը տեսակցելու իրավունքից: Այս իրադրությունը մեկուսացրել էր Քոքեար Սոթանին համայն աշխարհից ու դարձել էր վերջինիս դառը, աղեկորուս հեկեկամքների ու հուսահատության պատճառը: Ինչքան էլ տարօրինակ է հնչում, այս ստեղծագործության մեջ, Դանելշվարը բռնարար տղամարդու կերպարին փորձում է դրական հնչերանգներ հաղորդել, կանանց համարելով տղամարդկանց “ոչ տղամարդկային” արարքների պատասխանատու¹⁴:

Հեղինակի համոզմամբ, տիրող սոցիալական համակարգն ու անհատական դժբախտությունն են կնոջ միայնակության ու հոռետեսության պատճառը: Ավելի ուշ, հետհեղափոխական շրջանում, երբ կանանց հիմնահարցերը գերիշխող դարձան, ֆեմինիստական հիմնախն-

դիրները շեշտելու միտումով, Դանեշվարը վերափոխեց պատմվածքի գաղափարական ուղղվածությունը¹⁵:

1969-ին լույս է տեսնում Դանեշվարի “Մավուշում” վեպը: Կնոջ կողմից պարսկերեն լեզվով առաջին անգամ երբևէ հրատարակված այս վեպը կոչված էր դասվելու պարսկական գրականության գլուխգործոցներից շարքին¹⁶: “Մավուշումը” ասպարեզ բերեց վիպասանուհու գրական դիմանկարի կարևոր գծերը: Վեպը ամնախաղեպ հաջողություն ունեցավ Իրանում, այն վերահրատարակվեց տասնհինգ անգամ և երկու տասնամյակ մնաց իրանական գրական աշխարհում, որպես բնասելիք: Պարսկական գրականության պատմության մեջ սա միակ գիրքն է, որը միայն 1984-ին վաճառվել է 400 000 օրինակով¹⁷: Գիրքը թարգմանված է նաև աշխարհի բազմաթիվ լեզուներով:

Այդ վեպը իր ժամանակների կենդանի արձագանքն է, Դանեշվարը պատմական հարուստ փաստանյութի վրա նկարագրեց ազատագրական մաքառումներով լի ժամանակաշրջանի գեղարվեստական պատկերը: Վիպական գործողությունները տեղի են ունենում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Իրանի Ֆարս նահանգում, երբ երկրի ներքին և օտար ռեակցիոն ուժերի դեմ ազատագրական պայքարի հզոր ալիք էր բարձրացել: Վեպի գլխավոր հերոսուհու՝ Ջարիի ընտանիքը այդ պատմաքաղաքական խմորումների անմիջական մասնակիցն էր: Հերոսուհու ամուսինը՝ Յուսուֆը, հարուստ հողատեր էր և ազատագրական շարժման առաջնորդներից, որը իր զինակիցների հետ ժողովրդական խավերին համախմբում էր ընդվզելու օտարերկրյա գաղութարարների լծի դեմ: Յուսուֆը մախատիայի հիմքով ստեղծված ժողովրդական կերպար է, որն իր մեջ մարմնավորում է դեմոկրատական Իրանի ոգին:

Վեպի սկզբնական հատվածում հերոսուհու համար ամուսնու զուգափարաքաղաքական հայացքները խորթ ու անհասկանալի էին: Ջարին մեծ կարոտով էր վերհիշում իր անհոգ մանկության և պատանեկության տարիները: Ի տարբերություն դարասկզբի Իրանի հազարավոր դեռատի աղջիկների՝ Ջարին հասակ էր առել ազատախոհ միջավայրում և պահպանել էր իր անհատական անկախությունը անգլիական միսիոներական դպրոցում սովորելու տարիներին: Գլխավոր հերոսուհու միջոցով հեղինակը ասպարեզ է հանում կնոջ ներքին դրաման, նրա մտորումները կանանց միասլաղաղ ու աններդաշնակ կյանքի մասին. “Եթե միայն կանայք կստավարեին աշխարը. Կանայք, որոնք կյանք են արարում ու գիտեն վերջինիս արժեքը: Նրանք գիտեն սպասման, համբերության, միապաղաղ մարդկային գոյության, ինքնագոհողության արժեքը: Եթե աշխարհը լիներ կնոջ ձեռքերում, այնտեղ պատերազմ չէր լինի”¹⁸:

Ժամանակները փոխվում էին և հերոսուհու գաղափարական հանդգնումները նույնպես: Սովի ու անտարբերության մատմված հի-

վանդներին ու բանտարկյալներին հաճախակի այցելելու ընթացքում, Ջարին սկսում է զիտակցել ամուսնու և նրա զինակիցների հեղափոխական ծրագրերի իմաստն ու անհրաժեշտությունը: “Մավուշուն” վեպում Դանեշվարը վարպետորեն է ներկայացնում կնոջ հոգևոր կերպարանափոխումը: Քաղաքական խնդիրներից հեռու, փխրուն, հոգատար ու միկրոված մոր կերպարից մինչև հեղափոխական գաղափարներով լի շարժման առաջնորդի, որն ամուսնու մահից հետո ողաշում է շարունակել նրա հերոսական ուղին: Հերոսուհու բնորոշ հատկանիշը անճանական հակասություններից վեր բարձրանալու և ազգային գոյության գաղափարին հավատարմություն ծառայելու որոշումն է: Եվ այսպես, վիպասանուհին իր “վերամկրտված” հերոսուհու՝ Ջարիի կերպարի միջոցով շարունակում է 1950-ականներին պարսկական արձակում լայն տարածում գտած՝ զինակից, հեղափոխական կնոջ ավանդական թեման, որը ժամանակին իրենց ստեղծագործություններում մեծ վարպետությամբ են իմաստավորել ճանաչված արձակագիրներ՝ Բ. Ալավին և Ա. Սադեղը¹⁹:

Խիստ խորհրդանշական իմաստ ունի “Մավուշուն” վեպի ավարտը: Հերոսաբար նահատակված Յուսուֆի հուղարկավորման արալտորությունը Ջարին վերածում է մասսայական ցույցի: Որպես համաժողովրդական ցասման դրսեվորում՝ տասնյակ մարդիկ, զինակիցներ, գաղափարական համախոհներ են այցելում վերջին հրաժեշտը տալու և ողբալու նահատակված հերոսի մահը: Համազգային սգի վերածված այս պահը վիպասանուհին մույնացնում է պարսկական մեծ էպոսի՝ “Շահնամեի” առասպելական հերոս՝ Միավուշի անմեղ նահատակման հետ²⁰: Միավուշի նահատակման մասին լեգենդները ստեղծվել են են դեռևս վաղ անցյալում: Ազգային սովորույթ համարվող հերոսի հիշատակման օրերը անվանակոչել են “Մավուշուն”, որտեղից և ծագել է Դանեշվարի հանրաճանաչ վեպի խորագիրը²¹: “Նահատակության” գաղափարը դնելով աշխարհագրագոյության հիմքում, Դանեշվարը պատմական իրականությունը արտահայտող հավաստումներով քացահայտում է Յուսուֆի հերոսական վարքագիծը: Հերոսության և նահատակության փառաբանումը հանդիսանում են “Մավուշուն” վեպի լեզվական համակարգի կոնստիտուտիվ տարրերը:

Ինչպես “Պատահար” պատմվածքում, այնպես էլ “Մավուշուն” վեպում, հատուկ շեշտադրում ունեն հակաարևմտյան տրամադրությունները, որոնք կրում են Ջալալ Ալե Սիմադի 1962-ին լույս ընծայված՝ հանրահռչակ “Ղարբգադեգի” (“Արևմտաթունավորում”) աշխատության գաղափարական հայացքների ազդեցությունը: Ջալալ Ալե Սիմադը քննադատում էր շահի միապետական վարչակարգի կալմից որդեգրած արդիականացման արևմտյան մոդելը, որը ընթանում էր աստիճանական մեխանիզացիայով և ուժեղ վերահսկումներով²²:

Վեպում արևմուտքը իր հակասական իմաստավորումն է գտել անգլիացի հետախույզ Ջինգերի և միսիոներական դպրոցի անգլիացի տնօրենուհու կերպարների մեջ, որոնք հակակրանք ու անվստահություն էին սերմանում տեղաբնիկների մոտ: Անդրդառնալով դարասկզբին Իրանում բացված արևմտյան միսիոներական դպրոցների խնդրին. Դանեշվարը ընդգծում է միմյանց հակառող երկու կարևոր հանգամանք, սառաջինը նմանատիպ դպրոցների դերն ու նշանակությունն էր պարսիկ կանանց կրթության և էմանսիպացիայի տարածման գործում, երկրորդը՝ միսիոներական դպրոցում գործող արևմտականացված մեթոդներն էին, որոնք անտեսում ու ծաղրում էին մահմեդականների խոր արմատներ ունեցող ազգային ու կրոնական սովորույթները:

“Մավուշուն” վեպի ամենահիքնատիպ ու ուշագրավ կերպարներից է տիկին Ֆոթուհին, որի միջոցով վիպասանուհին արտահայտել է իրանական հասարակության մեջ ստեղծագործող կնոջ դրամատիկ ու ողբերգական ճակատագիրը: Տիկին Ֆոթուհին համարվել է կանանց իրավունքների պաշտպան, ժամանկի ազատախոհ, մտավորականներից մեկը, ով հրապարակայնորեն մի կող էր նետել “սև քողը”, իր ցասման ու բողոքի ձայնը բարձրացնելով տիրող կրոնական հետադիմական բարքերի դեմ: Դժբախտաբար, նրան վիճակված էր կյանքի մնացած տարիները անցկացնել հոգեբուժարանում, որտեղ իր դեղին տետրում համառորեն կշարունակեր շարադրել սեփական կյանքի պատմությունը: Հերոսուհու մարմնի և գրչի մետաֆորիկ “մերկությունը” հասարակությունը բնորոշեց, որպես հանցանք: Ինքնարտահայտումը վերածվեց ինքնակործանման, շարժումը՝ անշարժության, ձայնը՝ լռության, ներկայությունը՝ բացակայության: Վերջ ի վերջո հերոսուհին դատապարտվեց հոգեկան վտարանդիության, որտեղ սեփական մարմինն ու գրիչը կմնային հավերժ շղթայված: Տիկին Ֆոթուհին ապրում էր հոգեբանական երկփեղկվածություն՝ իրական կյանքում չգտնելով իր կեքսովածքին հարիր դաշնություն, նա հայտնվում է հոգեբանական խաթարման տիրույթում: Ինչպես մեկնաբանում է Ֆ. Սիլանին տիկին Ֆոթուհին մարմնավորում է կնոջ ողբերգական ճակատագիրը, ով դրժում է լռությունն ու նրա մեջ փակված մնալու իրողությունը²³: Հերոսուհին բոլոր ճնշված կին գրողների տուրքն էր, ով հիշեցնում էր ընթերցողներին, որ ինքնասրտահայտման գինը մահմեդական հասարակության մեջ ստեղծագործող կնոջ համար չափազանց բարձր է:

Դանեշվարի “Մավուշուն” վեպը, իր գաղափարական ու քեմատիկ ուղղվածությամբ առաջնային տեղ է զբաղեցնում նախահեղափոխական իրանական վիպագրության մեջ: Թեև վեպը ռեալիստական ստեղծագործություն է, նրանում մեջ բերված “երագի, հեքիաթի և առասպելի” պայմանական տարրերը օգնում են ըմբռնելու վեպի փիլիսոփայական-էթիկական և պատմական իմաստը²⁴:

Այսպիսով, իրանական գրականության մեծանուն արձակագիր Սիմին Դանեշվարը իր հասարակական և գրական գործունեությամբ հարազատ մնաց “սոցիալական ուղղվածության” գրական շարժմանը և գալիք տասնամյակներում իր լույսը սփռեց հետհեղափոխական պարսկական արձակի զարգացման ուղիներին՝ իր ստեղծագործություններում հատկապես շեշտադրելով կամանց հիմնախնդիրները:

Իրանի իսլամական հեղափոխությունից հետո կամանց գրականությունը ավելի քան երբևէ քաղաքականացված բնույթ ձեռք բերեց²⁵: Ֆեմինիստական գիտակցությունն ու կամանց հիմնահարցերը գերիշխող դարձան պարսիկ կին հեղինակների ստեղծագործություններում. մույնիսկ ավագ սերնդի այնպիսի ճանաչված գրողներ, ինչպիսիք են Սիմին Դանեշվարը և Սիմին Բեքրահանին, իրենց ստեղծագործություններում ավելի հաճախ սկսեցին բարձրաձայնել կամանց իրավունքների ու նրանց իրավահավասարության խնդիրներին մասին:

1987-ին տված իր հարցազրույցներից մեկում Ս. Դանեշվարը հատկանշեց այն փաստը, որ ֆեմինիստ է եղել իր ստեղծագործական գործունեության ողջ ընթացքում²⁶: Հետհեղափոխական իրանական գրականության մեջ ստեղծված ֆեմինիստական խնդիրների դիսկուրսիվ համակարգը համարավորություն ընձեռնեց Դանեշվարին պատասխանելու իր եության խորքերում շարունակաբար հոլովվող, մտահոգիչ հարցերին: “Որպես պարսիկ կին, ես տառապել եմ վարչակարգի բռնապետական քաղաքականությունից, արևելք և արևմուտք հասկացությունների չարաշահումից, անդրոցենտրիկ մշակույթի և ավանդապահ համակարգի սահմանափակումներից” այսպիսի բանավեճային շեշտադրումներով է հանդես գալիս հեղինակը, իր “Նամակ ընթերցողներին”²⁷ աշխատության մեջ:

Կամանց հիմնահարցերը յուրովի մեկնաբանելու միտումով արձակագիրը դիմեց մամուլանու, ինքնակենսագրության, հուշագրության ակնարկային ժանրաձևերին, որոնք մեծ մասսայականություն են վայելում հետհեղափոխական իրանական գրականության մեջ²⁸: 1982-ին լույս տեսավ Դանեշվարի վաղամեռիկ ամուսնու՝ Ջալալ Ալե Ահմադի հիշատակին նվիրված “Դուրբե Ջալալ” (“Ջալալի Մայրամուտը”) խորագրով ստեղծագործությունը: Ինքնակենսագրական նյութի վրա շարադրված այս գրքի յուրաքանչյուր հատվածում ընթերցողը բացահայտում է սիրտ, ըմտանիքի, ստեղծագործական պրպտումների միջև կանգնած մեկ այլ կնոջ դիմանակար: Դանեշվարը հատկանշում է իրանական անդրոցենտրիկ ըմտանեկան համակարգը, որտեղ կինը պարտավոր էր լռելայն տանելու բոլոր վիրավորանքներն ու նվաստացումները:

Եթե “Մավուշում” վեպի հերոսուհին կոչված է աջակցելու իր հեղափոխական ամուսնուն և շարունակելու նրա հերոսական ուղին, ապա “Ջալալի մայրամուտը” ստեղծագործության մեջ կնոջ ձայնը քո-

դագերժ է անում ամուսնուն, ցուցադրելով քաղաքական ակտիվիստի դիմակի ներքո թաքցնված իրական տղամարդու կերպարը²⁹:

Ինչպես “Ջալալի մայրամուտը”, այնպես էլ Դանեշվարի շատ այլ հուշագրությունները մամուլային եզրեր ունեն 90-ականներին Իրանում մեծ ճանաչում գտած Շահին Հանանիի “Փոշթե Դարիչեհա: Գովթեզու բա Համասարանե Հոմարմանդում”³⁰ (“Պատմականների հետևում: Մրկխոսություն Արտիստների Ամուսիմների հետ”) խորագիրը կրող գրքի հետ. որը Իրանի հայտնի մտավորականների և արվեստի գործիչների կանանց մտորումներն ու անձնական կյանքը լուսաբանող ինքնատիպ ընտրանի է: Իր բնույթով վիճահարույց այս աշխատությունը քննադատների շրջանում ունեցավ իր բացասական արձագանքները³¹: Սակայն ընդգծենք, որ հետհեղափոխական գրականության մեջ մեծ մասսայականություն վայելող կին գրողների գրչին պատկանող հուշագրություններն ու ինքնակենսագրական պատմումները ունեին մեծ հասարակական նշանակություն և ամրապնդում էին նրանց պայքարը հանուն իրավահավասարության: Նմանատիպ ստեղծագործությունները վերափոխում են արվեստի և կանանց հիմնախնդիրների նկատմամբ ունեցած “սոցիալական ուղղվածության” գրական շարժման մեջ գերիշխող տեսակետները:

Ֆեմինիստական գրական շարժման մեջ լայն տարածում գտած ակնարկային ժանրաձևերը մեծ հաջողությամբ հանդես եկան նաև արդի պարսիկ վտարանդի կին գրողների ստեղծագործություններում, որոնք իրենց ճանաչողական և քաղաքական նկատառումներով առաջնային տեղ են զբաղեցնում արևմտյան գրաքննադատների և ընթերցասերների շրջանակներում:

Կանանց հիմնախնդիրները արտահայտելու նպատակով 1986-ին Դանեշվարը հրատակեց “Էլ ու՞մ բարեվե՞” պատմվածքի վերամշակված տարբերակը³²: Պատմվածքի սկզբնական բովանդակության մեջ վերափոխված մի քանի պարբերությունները վկայակոչում են արձակագրի ֆեմինիստական գաղափարական շեշտադրումները: Պատմվածքի գլխավոր հերոսուհուն՝ ծեր ու լքված Բոքեբա Սուլթանին, որի միակ դուստրը ամուսնու հարկադրանքով էլեր այցելում միայնակ մորը, հուզում է այն դաժան իրականությունը, որտեղ կանայք չեն տնօրինում իրենց ճակատագրին: Ահա այն դրվագներից մեկը, որտեղ հազար օրհնանք ու լույս սփռելով դպրոցի տեսչուհու շիրիմին ծեր կինը վերհիշում է նրա իմաստուն ամեն մի արտահայտություն. “Բոլոր լույսերը, որ ճառագում են ձեր շիրիմին, բավարար չեն, տեսչուհի, դուք իրավացի էիք, որ կանայք հարյուր անգամ արժանապատիվ են քան տղամարդիկ.....”³³:

Ս.Դանեշվարի ստեղծագործական գործունեության հետհեղափոխական վաղը նշանավորվեց նաև նորարարական վիպագրությամբ³⁴: Այսպիսով, Սիմին Դանեշվարի ստեղծագործություններում իրենց իք-

նատիպ գեղարվեստական արժեքորումը ստացած կանանց հիմնախնդիրները, հատկանշեցին ֆեմինիստական գաղափարական ընկալումների նշանակությունն ու կարևորությունը արդի իրանական գրականության մեջ:

LILIT SAFRASTYAN

SIMIN DANESHVAR. FROM PREREVOLUTIONARY SOCIAL ISSUES UP TO POSTREVOLUTIONARY FEMINISM

One of the most renowned contemporary Iranian women writers Simin Daneshvar has started to write and publish in the pre-revolutionary era. Her creative years coincide with the sociopolitical events of the early 1960s, which have had substantial effects on her works. Pre-revolutionary social climate, contributed to the formation of Daneshvar's general ideological views. Daneshvar gained tremendous success with her novel "Savushun", published in 1969, the first novel ever written by Iranian women. "Savushun" became a best-seller for over two decades being reprinted fifteen times.

Some of Daneshvar's pre-Revolutionary writings like "The Playhouse", "To Whom Can I Say Hello", and "The Accident" portray the plight of women in Iranian society. In depicting these women author places a grater emphasis upon the effects of class and foreign oppression than upon male domination. Daneshvar's women heroes publicize revolutionary political activism, and criticize western cultural infiltration, but in the same time, they overlook the role of patriarchy.

After the Islamic revolution Daneshvar becomes one of the leading female prose writers, who have become influenced and touched by the change of Iran's socio-political structure. In her post-revolutionary works, Daneshvar has abandoned her past forms and themes and has started to write personal stories from a feminist point of view. In her two stories such as "Jalal's Sunset" (1982), a biographical account of her relationship with her late husband Jalal Ale Ahmad, and "To Whom Can I Say Hello?" Daneshvar portrays male dominated, male centered society in which women are depressed.

ՇԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. K. Talattof, *The Politics of Writing in Iran*, Syracuse, N. Y., 2000, p.69.
2. Ավելի մանրամասն դրա մասին տես՝ K. Talattof., *The Politics of Writing in Iran*, Syracuse, New York, 2000, p.19-64.
3. Mohammad R.Ghanoonparvar, *Prophets of Doom: Literature as a Socio-Political Phenomenon in Modern Iran*, Lanham and London, 1984, p. 27.
4. Մինչ Դանեշվարը, իրանական արձակուրդ դեռևս 1945թ. լույս է տեսել պարսիկ հայտնի հասարակական գործիչ՝ Մարիամ Ֆիրուզի "Ավսանե վա Ավսարե ման" խորագրով ինքնագեղանագրական պատմվածքը, որը նվիրված է Իրանի բոլոր իրավագուրկ մայրերին:

5. Farzaneh Milani, *Veils and Words: The Emerging Voices of Iranian Women Writers*. Syracuse, N. Y., 1992, p. 181.
6. *Ibid.*, p.183.
7. *Ibid.*, p.72.
8. Տես՝ Մոհամմադ Ալի Սեփամալու, Բազ Աֆարինեյի Վաղեաբ: Բիսթ օ Հաֆթ Ղեսսե ազ Բիսթ օ Հաֆթ Նեվիսանդե Մոասիրե Իրան, Թեհրան, Նեզահ, 1988.
9. K. Talattof., *The Politics of Writing in Iran*, Syracuse. N. Y. 2000, p. 94.
10. Franklin Lewis, Farzin Yazdanfar, *In a Voice of Their Own: A Collection of Stories by Iranian Women since The Revolution of 1979*, Costa Mesa, CA. 1996, p. XVII.
11. Nasrin Rahimieh, *World Literature in Review: Iran, World Literature Today*, Vol. 64, No.4, 1990, p. 690-91.
12. Simin Daneshvar, *Daneshvar's "Playhouse": A Collection of Stories*. Trans. Maryam Mafi, Washington, D.C., 1989, p.32.
13. K. Talattof., *The Politics of Writing in Iran*, Syracuse, New York. 2000, p.99.
14. Տես վեպի առաջին տարբերակը՝ Սիմին Դանեշվար, Բե Զի Սալամ Զոնամ, Ալեֆբա, 2, 1973, էջ 142-51.
15. Տես՝ Սիմին Դանեշվար, Բե Զի Սալամ Զոնամ, Թեհրան, 1986, էջ 75-93.
16. Սինչ Սիմին Դանեշվարի "Սավուշուն" վեպի լույս ընծայումը, ֆրանսերեն լեզվով մի շարք պատմական վեպեր է գրել Թեհրանի համալսարանի ֆրանսերեն լեզվի և գրականության դասախոս, Ամին Փաքրավանդ:
17. Farzaneh Milani, *Veils and Words: The Emerging Voices of Iranian Women Writers*. Syracuse, New York, 1992, p. 183.
18. Симин Данешвар, *Смерть ради жизни*, Москва, 1975, с. 172.
19. М. Якачева, *Женщина в персидской прозе*, Ташкент, 1964, с. 66-79.
20. Д. Комиссаров, *О Симин Данешвар и ее романе. - Симин Данешвар, Смерть ради жизни. Москва, 1975, с. 270.*
21. Там же, с. 241.
22. Pedram Partovi, *Authorial Intention and Illocutionary Force in Jalal Ali-I Ahmad's Gharbzadagi, Comparative Studies of South Asia, Africa and Middle East*, Vol.XVIII, 2, 1998, p. 73-80.
23. Farzaneh Milani, *Veils and Words: The Emerging Voices of Iranian Women Writers*. Syracuse, New York, 1992, p. 60.
24. Д. Комиссаров, *О Симин Данешвар и ее романе.- Симин Данешвар, Смерть ради жизни, Москва, 1975, с. 271.*
25. Farzaneh Milani, *Veils and Words: The Emerging Voices of Iranian Women Writers*. Syracuse, New York, 1992, p. 234.
26. Տես՝ Նասիր Հարիրի, Հոնար վա Աղաթաթե Էմրուզ, Բարու, 1987, էջ 66.
27. Simin Daneshvar, *A Letter to Readers, in Daneshvar's Playhouse: A Collections of Stories*, trans. Maryam Mafi, Washington, D.C., 1989, p. 154-70.
28. Այդ մասին մանրամասն տես՝ Afsaneh Najmabadi, *Women's Autobiographies in Contemporary Iran*, Cambridge, Mass., 1990.
29. K. Talattof., *The Politics of Writing in Iran*, Syracuse, N. Y., 2000, p.160.

30. Տես՝ Շահին Հանանիի, Փոշթի Դարիչեհա: Գովթեզու քա Համսարանն Հոնարմանդան, Թեհրան, 1992.
31. Վերոհիշյալ աշխատության մասին »սոցիալական ուղղվածության« գրական շարժման համխոհ մի քանի գրաքննադատներ իրենց բացասական գրախոսականներով հանդես եկան ճանաչված գրական և մշակութային»Ադինե« ամսագրում: տես՝ Նադդե Զեթար Ազ Փոշթի Փանջարեհա, Ադինե, 75, 1992, էջ 38.
32. Տես՝ Սիմին Դանեշվար, Բե Զի Սալամ Զոնամ, Թեհրան: Խարազմի, 1986, էջ 75-93.
33. Նույն տեղում, էջ, 82.
34. Sayer Mohammadi, An Interview With Simin Daneshvar. - Iran: Daily Newspaper, February 4 2002.